# Արձանագրություն N3
## ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

30.01.2020թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գույգույան /գնահատող/, Ա. Մարգարյան /գնահատող/, Ս. Գևորգյան /բացող/, Ե. Մատայան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

## 1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և անհամապատասխանությունը շտկելու մասին

---

(Ա. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ արձանագրություն 2-ով «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ին տրվել էր մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու:

Մասնակցի կողմից սահմանված ժամանակահատվածում շտկվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Եվ մասնակիցների փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 2. Ոչ գնային պայմանները բավարարող միաժամանակյա բանակցություններ անցկացնելու մասին

---

(Ա. Մարտիրոսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներ որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.» որոշեց նիստը կասեցնել և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

2.2 Գնման ընթացակարգը ընդհատել մինչև միաժամանակյա բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը՝ 04.02.2020թ. ժամը 12:00-ը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Մարտիրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 04.02.2020թ. ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ 224/2 սենյակ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------- Ա. Մարտիրոսյան

---------------------------------- Վ. Գուլգուլյան

---------------------------------- Ա. Մարգարյան

Անդամներ՝ ---------------------------------- Ս. Գևորգյան

---------------------------------- Ե. Մատասյան

Քարտուղար՝ ---------------------------------- Թ.Հովեսյան